ՊՐԱԳԱՅԻ ՄԱՆԻՖԵՍՏԸ
ԷՍՊԵՐԱՆՏՈ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՎԻ ՇԱՐԺՄԱՆ

Մենք՝ Էսպերանտոյի առաջընթացին նվիրված համաշխարհային շարժման մասնակիցներս,
ուղղում ենք **սույն մանիֆեստը բոլոր կառավարություններին, միջազգային կազմակերպություններին և բարի կամքի մարդկանց,**
հայտարարում **հաստատակամորեն մեր մտադրությունը՝ ծառայել այստեղ արտահայտված նպատակներին և**
հրավիրում **յուրաքանչյուր կազմակերպության ու անհատի միանալու մեր ձգտումներին:**

Էսպերանտոն, որը ստեղծվել էր 1887թ. որպես մրջազգային հաղորդակցության համար օժանդակ լեզվի նախագիծ և, արագորեն զարգանալով, վերածվել կենսունակ և նրբերանգներով հարուստ լեզվի, արդեն ավելի քան հարյուր տարի գործում է ի նպաստ մարդկանց միասնության՝ հաղթահարելով լեզվական և մշակութային խոչընդոտները:
Ժամանակի ընթացքում Էսպերանտո լեզվով խոսողների նպատակները չկորցրեցին իրենց կարևորությունն ու հրատապությունը: Ոչ՛ որոշ ազգային լեզուների համաշխարհային գործածությունը, ոչ՛ հաղորդակցական տեխնիկայի առաջընթացը, ոչ՛ լեզուների ուսուցման նորագույն մեթոդների հայտնագործումը հավանաբար չեն իրականացնի այն սկզբունքները, որոնք մենք էական ենք համարում լեզվի գործուն և արդարացի կարգավիճակի համար:

1. Ժողովրդավարություն. Հաղորդակցական համակարգը, որը որոշ մարդկանց արտոնություններ է պարգևում ողջ կյանքի ընթացքում, սակայն ուրիշներից պահանջում, որ նրանք տարիներ շարունակ ջանքեր ներդնեն ինչ-որ մակարդակի հասնելու համար, իր հիմքում իսկ հակաժողովրդական է: Թեև, ինչպես ամեն լեզու, Էսպերանտոն ևս կատարյալ չէ, այնուամենայնիվ համաշխարհային հավասարազոր հաղորդակցության ոլորտում այն մեծապես գերազանցում է յուրաքանչյուր մրցակցի:
Մենք հավաստիացնում ենք, որ լեզուների անհավասարությունը հանգեցնում է հաղորդակցական անհավասարության՝ բոլոր մակարդակներում, ներառյալ միջազգային մակարդակը: Մեր շարժման նպատակը ժողովրդավարական հաղորդակցությունն է:

2. Ազգությունից վեր կրթություն. Յուրաքանչյուր ազգային լեզու կապված է որոշակի մշակույթի և ազգության հետ: Օրինակ անգլերեն լեզու ուսումնասիրող աշակերտը ծանոթանում է անգլերեն խոսող երկրների, մասնավորապես Միացյալ Նահանգների և Մեծ Բրիտանիայի մշակույթին, աշխարագրությանը և քաղաքականությանը: Էսպերանտո լեզուն ուսումնասիրող աշակերտը ծանոթանում է ողջ աշխարհին՝ առանց սահմանների, որտեղ յուրաքանչյուր երկիր ներկայանում է որպես առանձին տուն-ընտանիք:
Մենք հավաստիացնում ենք, որ ցանկացած ազգային լեզվով կրթությունը հանգեցնում է աշխարհի նկատմամբ յուրօրինակ ըմբռնողության: Մեր շարժման նպատակն է ազգությունից վեր կրթությունը:

3. Մանկավարժական արդյունավետություն. Օտար լեզու սովորողների միայն փոքր տոկոսն է, որ լիովին տիրապետում է այն: Էսպերանտո լեզուն հնարավոր է տիրապետել նույնիսկ ինքնուսուցման միջոցով: Ուսումնասիրությունները բացահայտել են, որ Էսպերանտո լեզվի իմացությունը նպաստում է այլ լեզուների յուրացմանը: Հանձնարարելի է նաև լեզվի դասընթացներում Էսպերանտոն օգտագործել որպես հիմնալեզու՝ սովորողների մոտ լեզվի գիտակցումը զարգացնելու համար:
Մենք հավաստիացնում ենք, որ ազգային լեզուների բարդությունները մշտապես արգելքներ կստեղծեն բազմաթիվ սովորողների առջև, որոնց համար, սակայն, երկրորդ լեզվի իմացությունը շահավետ կլիներ: Մեր շարժման նպատակն է լեզվի արդյունավետ ուսուցումը:

4. Բազմալեզվություն. Էսպերանտո-համայնքը համաշխարհային մասշտաբով այն սակավաթիվ լեզվական համայնքներից է, որի ներկայացուցիչները առանց բացառության տիրապետում են երկու կամ ավելի լեզուների: Համայնքի յուրաքանչյուր անդամ առաջադրանք է ստանձնում սովորելու առնվազն մեկ օտար լեզու՝ հասցնելով այն խոսակցականի աստիճանին: Շատ դեպքերում դա հանգեցնում է լեզուների նկատմամբ սիրո, դրանք տիրապետելու ցանկության և ընդհանրապես անձնական մտահորիզոնի ընդարձակման:
Մենք հավաստիացնում ենք, որ բոլոր մեծ թե փոքր լեզվական համայնքների ներկայացուցիչները կօգտվեին երկրորդ լեզվի կատարելապես տիրապետման իրական հնարավորությունից: Մեր շարժման նպատակն է այդպիսի հնարավորությունն տրամադրելը:

5. Լեզվական իրավունքներ. Լեզուների միջև իշխանության անհավասար բաժանումը աշխարհի բնակչության գերակշռող մասի համար լեզվական մշտական անապահովության կամ անմիջական ճնշման պատճառ է հանդիսանում: Էսպերանտո-համայնքում մեծ կամ փոքր, պաշտոնական կամ ոչ պաշտոնական լեզուների ներկայացուցիչները հանդիպում են չեզոք հողի վրա՝ շնորհիվ կամավոր փոխզիջողության: Լեզվական իրավունքների և պարտավորությունների այս հավասարազորությունը լեզվական անհավասարությունների և բախումների առնչությամբ այլ լուծումների մշակման ու գնահատման նախադեպ է ստեղծում:
Մենք հավաստիացնում ենք, որ լեզուների միջև իշխանության բաշխման էական տարբերությունները քայքայում են միջազգային բազմաթիվ փաստաթղթերում արտահայտված՝ լեզուների նկատմամբ անվերապահ վերաբերմունքի երաշխիքները: Մեր շարժման նպատակն է լեզվական իրավունքների պաշտպանությունը:

6. Լեզուների բազմազանությունը. Ազգային կառավարությունները հակված են նկատել, որ աշխարհի լեզուների մեծ բազմազանությունը հանդիսանում է հաղորդակցմանը և զարգացմանը խոչընդոտող պատնեշ: Էսպերանտո-համայնքի համար, սակայն, լեզուների բազմազանությունը հարստության մշտական և մատչելի աղբյուր է: Հետևաբար յուրաքանչյուր լեզու, ինչպես և յուրաքաչյուր գոյատեսակ, արդեն ինքնին արժեք է ներկայացնում և արժանի է պաշտպանության և աջակցության:
Մենք հավաստիացնում ենք, որ հաղորդակցման և զարգացման քաղաքականությունը, եթե դրա հիմքում չկա հարգանք և աջակցություն բոլոր լեզուների նկատմամբ, աշխարհի լեզուների գերակշռող մասին դատապարտում է բնաջնջման: Մեր շարժման նպատակն է լեզուների բազմազանությունը:

7. Մարդու ազատագրումը. Յուրաքանչյուր լեզու ազատագրում և ազատազրկում է իր համայնքի անդամներին՝ հնարավորություն տալով նրանց հաղորդակցվելու միմյանց հետ և խոչընդոտելով հաղորդակցությունը մյուս համայնքների ներկայացուցիչների հետ: Որպես հաղորդակցության պլանավորված և ունիվերսալ միջոց, Էսպերանտոն մարդու ազատագրման գործող մեծ ծրագրերից մեկն է, ծրագիր, որը յուրաքանչյուր մարդու հնարավորություն է տալիս իր անհատական անկաշկանդ մասնակցությունը ցուցաբերելու մարդկության համայնքին՝ միաժամանակ ամուր արմատներով կապված լինելով իր տեղական մշակութային և լեզվական ավանդույթներին:
Մենք հավաստիացնում ենք, որ բացառապես ազգային լեզվի գործածությունը անխուսափելիորեն խոչընդոտում է ինքնարտահայտման, հաղորդակցման ու միավորման ազատություններին: Մեր շարժման նպատակը մարդու ազատագրումն է:

(Հրապարակվել է 1996թ. Պրագայում՝ 81-րդ Համաշխարհային Վեհաժողովում)